



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵՍԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2021- 24.03/ 275
24.03.2021 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Գնել Սանոսյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ, 51-րդ հոդվածները ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ՀՀ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագրերի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝ ըստ միջոցառումում նշված ժամանակահատվածի:

Հանրակրթական դպրոցներում սովորողների, ուսուցիչների և ծնողների շրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարի թեմաներով զեկույցների նախապատրաստում և սեմինարների անցկացում **(2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր)**

- Արդյո՞ք նախապատրաստվել և անց են կացվել սեմինարներ աշակերտների, ուսուցիչների և ծնողների համար, եթե այո՝ ի՞նչ մասնագետներ են պատրաստվել սեմինարները վարելու համար, քանի՞ մասնագետ, որ հանրակրթական դպրոցներում քանի սեմինար է անցկացվել և քանի հոգի է մասնակցել, նրանցից քանիսն էին աշակերտ, ծնող և ուսուցիչ (խնդրում եմ տրամադրել սեմինարների օրակարգը և մոդուլը):

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց, նարկոլոգիական ծառայությունում հաշվառված այն անձանց համար, որոնք գտնվում են դադարի (ռեմիսիայի) շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը.

- վերականգնողական ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և գնահատում,
 - ծառայությունների փաթեթի մշակում,
- համապատասխան ծառայությունների տրամադրում, այդ թվում՝ պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում նրանց ընդգրկում **(2018 թ., 2019 թ., 2020 թ.)**

- Արդյո՞ք սուսումնասիրվել և գնահատվել է վերականգնողական ծառայությունների կարիքները, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել դրանց հղումները կամ պատճենները
- Արդյո՞ք մշակվել է ծառայությունների փաթեթ, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել համապատասխան հղում կամ պատճեն
- Արդյո՞ք տրամադրվել են ծառայություններ, եթե այո՝ ինչ ծառայություններ են տրամադրվել, քանի՞ հոգու, որ համայնքներից

Սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակում՝ թմրամոլության հակում ունեցող անձանց մատուցվող ծառայությունների փաթեթի մշակում, համապատասխան ծառայությունների տրամադրում **(2018 թ., 2019 թ., 2020 թ.)**

- Արդյո՞ք մշակվել է համապատասխան ծառայությունների փաթեթ և տրամադրվել են ծառայություններ, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել փաթեթի վերաբերյալ տեղեկություններ, ինչպիսի ծառայություններ են նախատեսվել, ինչպես նաև ծառայություններից օգտված անձանց թիվը՝ ըստ ծառայությունների տեսակների և համայնքների

Բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների, մարզային, համայնքային սոցիալական ծառայությունների միջև սերտ համագործակցության ապահովում **(2018 թ., 2019 թ., 2020 թ.)**

- Արդյո՞ք ապահովվել է սերտ համագործակցություն նշյալ կազմակերպությունների միջև, ինչպե՞ս
- Սոցիալական քանի՞ դեպք է վարվել յուրաքանչյուր տարի և արդյո՞ք բացահայտվել են ռիսկային գործոններ, եթե այո՝ ինչպիսի կանխարգելիչ միջոցառումներ են կազմակերպվել
- Արդյո՞ք գրանցվել է առաջընթաց թմրաբանական ծառայությունների մատչելիության ապահովման գործընթացում, ինչպե՞ս է դա արտացոլվում
- Արդյո՞ք մարզն ապահովված է բժիշկ-թմրաբանով: Եթե այո, քանի՞ բժիշկ-թմրաբան կա

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Առողջ ապրելակերպի» դասավանդման ընթացքում թմրամոլության կանխարգելման վերաբերյալ թեմաների ուսուցում **(2018 թ., 2019 թ., 2020 թ.)**

- Քանի՞ և ո՞ր նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում է ապահովվել թմրամոլության կանխարգելման վերաբերյալ թեմաների ուսուցումը (խնդրում եմ տրամադրել կոնկրետ թեմաները և յուրաքանչյուր թեմայով դասաժամերի քանակը)

Տիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում **(2018 թ., 2019 թ., 2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր)**

Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն՝ տպագիր, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով (2018 թ., 2019 թ., 2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր)

- Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական քանի՞ միջոցառում է կազմակերպվել, որտե՞ղ, ովքե՞ր են եղել մասնակիցները և որքա՞ն է եղել նրանց թիվը
- Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչության շրջանակներում քանի՞ հրապարակում է եղել և ո՞ր լրատվամիջոցներով (խնդրում եմ դրամադրել հրապարակումների հղումները և/կամ լուսապատճենները)

Ըստ բնականության վայրերի պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում (2018 թ., 2019 թ., 2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր)

- Արդյո՞ք ստեղծվել են խաղահրապարակներ, եթե այո՝ քանի՞ խաղահրապարակ է ստեղծվել և որ բնակավայրերում, դրանցից քանիսը բակերում և քանիսը զբոսայգիներում:

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել յուրաքանչյուր տարվա համար առանձին:
Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե նշված գործողությունների իրականացման համար որքան ֆինանսական ռեսուրսներ են պահանջվել և ծախսվել, ինչ աղբյուրներից են ֆինանսական միջոցները ներդրվել (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ յուրաքանչյուր գործողության, որի համար ֆինանսական միջոցներ են հատկացվել):

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268



Արթուր Սաքունց